ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
Էլ.փոստ՝ surensavan.ararat@mta.gov.am հեռ.055-53-53-54

ՈՐՈՇՈՒՄ

<< 20 >> հունվարի 2021 թվական թիվ 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 01 ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով ավագանին որոշեց հաստատել օրակարգը.

Որոշում թիվ 01

Հաստատել 2021 թվականի հունվարի 20-ի թիվ 01 նիստի օրակարգը հետևյալ քննարկվող հարցերով.

1.ՀՀ Արարատի մարզի Սուրենավան համայնքի 2021թ. բյուջեի հաստատման մասին:

2.ՀՀ Արարատի մարզի Սուրենավան համայնքի 2021թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի հաստատման մասին:

3.ՀՀ Արարատի մարզի Սուրենավան համայնքի 2021թ. համար համայնքային աշխատակազմի , <<ՎԱՐԴ>> մանկապարտեզ ՀՈԱԿ–ի աշխատողների քանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին:

Կողմ- 6 դեմ-0 ձեռնպահ -0

Հ.Աբրահամյան

Լ.Նաղարյան

Գ.Գրիգորյան

Պ.Ադամյան

Կ. Մարտիրոսյան

Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար՝ Կ. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
Էլ.փոստ՝ surensavan.ararat@mta.gov.am հեռ.055-53-53-54

ՈՐՈՇՈՒՄ

<< 20 >> հունվարի 2021 թվական թիվ 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Բյուջետային համակարգի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 32 –րդ հոդվածի պահանջներով .

Ավագանին Որոշեց թիվ 02

ՀՀ Արարատի մարզի Սուրենավան համայնքի 2021թ.բյուջեն՝
Եկամուտների գծով՝ 63600,2
Ծախսերի գծով՝ 63600,2
Ընդամենը եկամուտներ,այդ թվում/հազար դրամներով/
1.Հարկեր և տուրքեր,այդ թվում
Գույքային հարկեր անշարժ գույքից,այդ թվում
Գույքահարկ շենք և շինություններից,որից 1707,0
Ֆիզիկական անձանցից 1380,0
Իրավաբանական անձանցից 327,0
Հողի հարկ,այդ թվում՝7530,0
Ֆիզիկական անձանցից 6210,0
Իրավաբանական անձանցից 1320,0
Գույքահարկ փոխադրամիջոցներից 5500,0
Տեղական տուրքեր,որից՝1060,0
Ծխախոտի վաճառքի թույլտվություն 250,0
Խմիչքների իրացման համար 250,0
Վառելիքի վաճառքի համար 510,0
Ժամը 24-ից հետո աշխատելու համար 50,0
Տաքսի ծառայության համար
Տեխնիկական հեղուկների վաճառքի համար 60,0
Շինությունների թույլտվության համար 20,0

2.Պաշտոնական դրամաշնորհներ,այդ թվում 43693,2
Ընթացիկ ներքին դրամաշնորհներ/դոտացիա/ 43693,2
3.Այլ եկամուտներ,այդ թվում՝
Գույքի վարձակալությունից մուտքեր,որից 2350,0
Հողերի վարձակալություն 2300,0
Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից,որից՝ խմելու ջուր 0
Աղբահանություն 0
Վարչական մասի պահուստային ֆոնդ 0
Ֆոնդային բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդը կկազմի 1356,8
Վարչական սարքավորումներ ձեռք բերելու համար 0
Բյուջետային ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման
Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում
Որից՝ ըստ հոդվածների
4111- աշխատավարձ 21711,2
4212- էներգետիկ ծառայություն 600,0
4214-կապի ծառայություն 170,0
4215- ապահովագրական ծախսեր 35,0
4221- ներքին գործուղումներ 100,0
4232- համակարգչային ծառայություն 163,2
4234-տեղեկատվական ծառայություն 100,0
4252-մեքենաների ընթացիկ նորոգում 600,0
4261-գրասենյակային նյութեր 350,0
4264-տրանսպորտային նյութեր 500,0
4267-կենցաղային նյութեր 160,0
4269-հատուկ նպատակային այլ նյութեր 60,0
4823-պարտադիր վճարներ 20,0
4819հոդվածով նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին
Հանգստի,մշակույթ և կրոն/այլ դասերին չհետապնդող/
4111-4651,4
4239 հոդվածով ընդհանուր բնույթի ծախսեր 200,0
4269 հոդվածով 800,0
4251 ճանապարհային տրանսպորտ 5000,0
Սոցիալական պաշտպանություն/այլ դասերի չպատկանող/
Որից՝4726 հոդվածով հուղարկավորության նպաստ 0
4727 հոդվածով կրթաթոշակային նպաստ 4320,0
4239հոդվածով ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 500,0
Փողոցների արտաքին լուսավորություն
4212 էներգետիկ ծառայություն 1000,0
ՀՀ Կառավարության և համայնքային պահուստային ֆոնդ
4891հոդվածով պահուստային միջոցներ 10035,3
Նախադպրոցական կրթություն 19300,0
Որից՝4111հոդվածով աշխատավարձ 12124,0
4212 հոդվածով էներգետիկ ծառայություն 400,0
4213 հոդվածով կոմունալ ծառայություն 200,0
4221 հոդվածով ներքին գործուղումներ 100,0
4267 հոդվածով կենցաղային և հանրային սննդի նյութեր 2350,0

Կողմ- 6 դեմ-0 ձեռնպահ -0

Հ.Աբրահամյան

Լ.Նադարյան

Գ.Գրիգորյան

Պ.Ադամյան

Կ. Մարտիրոսյան

Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար՝ Կ. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
էլ.փոստ՝ surensavan.ararat@mta.gov.am հեռ.055-53-53-54

ՈՐՈՇՈՒՄ

<< 20 >> հունվարի 2021 թվական թիվ 03-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով և << Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 9-14 –րդ հոդվածներով ավագանին որոշեց.

Որոշում թիվ 03-Ն

1.Սահմանել 2021թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը.

1)ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինություններ (ներառյալ՝ոչ հիմնական շինությունների շինարարության(տեղադրման) (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000դրամ,

բ. սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների համար՝30000դրամ,

- 500-ից մինչև1000քմ ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների համար՝ 70000դրամ:

-1000-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 100000դրամ:

գ. ոչ հիմնական շինությունների համար՝

-մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների ի համար՝ 3000դրամ,
- 20և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենք շինությունների համար՝5000դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվության չպահանջվող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

ա. չի նախատեսվում կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով շենք շինությունների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն 3000դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) հետևանքով շենք շինությունների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսված է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այկ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3)Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000դրամ:

4)համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար 2019 թվականի համար150.000/ հարյուր հիսուն հազար դրամ/:

5)համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի ,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի ,մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների
տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար 2019 թվականի համար 30.000/ երեսուն հազար դրամ/:

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու համար օրացույցային տարվա համար 50.000 դրամ:

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար ՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝3400/երեք հազար չորս հարյուր / ՀՀ դրամ.

-26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 4000/չորս հազար /ՀՀ դրամ:

-50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում է4700/ չորս հազար յոթ հարյուր/ՀՀ դրամ:

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 7400/ յոթ հազար չորս հարյուր /ՀՀ դրամ.

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում `15000/ տասնհինգ հազար /ՀՀ դրամ:

-500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ` 33.000/երեսուներեք հազար /ՀՀ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար`յուրաքանչյուր եռամսյակի համար`

-մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում `2000 /երկու հազար /ՀՀ դրամ:

-26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ` 4.000/չորս հազար/ ՀՀ դրամ:

-50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում `4.600/չորս հազար վեց հարյուր/ՀՀ դրամ:

-100-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7.000/յոթ հազար /ՀՀ դրամ:

-200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերոս ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ` 15.000/տասնհինգ հազար/ՀՀ դրամ:

-500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազամակերպման դեպքում `33.000/երեսուներեք հազար /ՀՀ դրամ:

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 120/մեկ հարյուր քսան/ՀՀ դրամ մեկ քառակուսի մետրի համար :

9)Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24^{00} –ից հետո աշխատելու թույլտվության համար `2020 թվականի համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000դրամ

բ.հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50000դրամ

գ. բաղնիքների/սաունաների/ համար՝ 200000դրամ

դ. խաղատների կազմակերպման համար՝ 500000դրամ

ե.շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000դրամ

զ. վիճակախաղերի կազմակերպման համար՝ 75000դրամ

10)Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ տեղական տուրքը սահմանվում է՝

ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 300դրամ

բ.թունդ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 800դրամ

գ. այլ արտաքին գովազդի համար՝ 300 դրամ

դ. դատարկ գովազդային վահանակների համար՝ 250 դրամ

11)Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար սահմանվում է 2000դրամ:

12) Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվությանհամար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝10000դրամ:

13) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշը, զինանշանը , անվանումը և այլ որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության , աշխատանքների կատարման , ծառայությունների մատուցման գործնթացներում , օրացույցային տարվա համար 50000 դրամ:

14) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար 10000/տաս հազար/ դրամ:

15)համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայաությունների իրականացման և (կամ) մատուցման համար 50000 /հիսուն հազար/դրամ:

16) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույտվության համար , օրացույցային տարվա համար՝

ա. 3 հա –ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար 2500000 դրամ.

բ. 5 հա –ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատնեի համար 5000000 դրամ .

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար 7000000 դրամ.

դ. 10 հա-ից ավելի մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 դրամ.

1. Օրացույցային տարվա համար ավագանու կողմից սահմանված տեղական վճարների դրույքաչափերը փոփոխության չեն կարող ենթարկվել:

17) Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար 50000 դրամ:

2. Տեղական վճարների դրույքաչափերը

1) Համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները՝

ա. Համայնքի տարածքում շինարարություն կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու , ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ :

բ. տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և
այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝ 3000 դրամ :
գ. տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներ վճար ՝ 3000 դրամ :
2) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների փոխհատուցման վճարը սահմանել 5000 դրամ:

Կողմ- 6 դեմ-0 ձեռնպահ -0

Հ.Աբրահամյան

Լ.Նադարյան

Գ.Գրիգորյան

Պ.Ադամյան

Կ. Մարտիրոսյան

Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար՝ Կ. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
էլ.փոստ՝ surensavan.ararat@mta.gov.am հեռ.055-53-53-54

ՈՐՈՇՈՒՄ

<< 20 >> հունվարի 2021 թվական թիվ 04-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ <<ՎԱՐԴ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջով ավագանին որոշում է .

Ավագանին ՈՐՈՇԵՑ N 04-Ն

1.Հաստատել 2021թվականի համար Սուրենավան համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ՝ համաձայն հավելված 1-ի
2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնքի <<ՎԱՐԴ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատողների քանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ՝համաձայն հավելված 2-ի:

Կողմ- 6 դեմ-0 ձեռնպահ -0

Հ.Աբրահամյան

Լ.Նադարյան

Գ.Գրիգորյան

Պ.Ադամյան

Կ. Մարտիրոսյան

Վ. Ղազարյան

Համայնքի ղեկավար՝ Կ. Կարապետյան

Հավելված 1
Սուրենավան համայնքի ավագանու
2021թվականի հունվարի 20-ի N 04-Ն որոշման

ՍՈՒՐԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատողների քանակը՝ 17
2.Աշխատողների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը
Համայնքի ղեկավար	1 դրույք	289.6
Հայեցողական պաշտոններ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1 դրույք	151.7
Համայնքային ծառայության պաշտոններ		
Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1 դրույք	236.9
Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1 դրույք	225.0
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1 դրույք	150.0
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1 դրույք	126.2
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1 դրույք	121.2
Տեխսպասարկման անձնակազմ		
Գործավար	1 դրույք	93,2
Օպերատոր	1 դրույք	104.7
Հավաքարար	1 դրույք	93,2
Վարորդ	1 դրույք	89,1
Պահակ	1 դրույք	93,2
Տնօրեն	1 դրույք	129.3
Գեղմասվար	1 դրույք	104.7
Գրադարանավար	1 դրույք	89.1
Հարկահավաք	1 դրույք	103.8
Հավաքարար	1 դրույք	93.2

Համայնքի ղեկավար՝ Կ.Կարապետյան

Հավելված 2
Սուրենավան համայնքի ավագանու
2021 թվականի հունվարի 20-ի N 04-Ն որոշման

ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ <<ՎԱՐԴ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատողների քանակը՝ 14
2.Աշխատողների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը
Տնօրեն	1 դրույք	191.0
Դաստիարակ	1 դրույք	93.0
Դաստիարակ	1 դրույք	93.0
Դաստիարակ	1 դրույք	93.0
Դաստիարակ	0.75 դրույք	72.8
Հաշվապահ	0.75 դրույք	100.0
Դայակ	1.1 դրույք	72.8
Դայակ	1.1 դրույք	72.8
Դայակ	1.1 դրույք	72.8
Խոհարար	1 դրույք	72.8
Խոհարարի օգնական, դոնապահ	1 դրույք	72.8
Դաշնակահար	0.75 դրույք	93.0
Տնտեսվար-լվացքարար	1.25 դրույք	93.0
Պահակ	1 դրույք	72.8

Համայնքի ղեկավար՝ Կ.Կարապետյան